ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 24

«15» 04 2022 թ. ք. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԴԱՏԱԽԱԶ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՓԻԼԻՊՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 14-ի որոշումը և ՀՀ գլխավոր դատախազի՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազ Տիգրան Սուքիասյանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին 2022 թվականի ապրիլի 15-ի որոշումը և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և 54-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի հունիսի 5-ի՝ «Դատախազի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և իրականացնելու կարգը սահմանելու մասին» N 49 հրամանով սահմանված կարգի 35-րդ, 42-րդ և 43-րդ կետերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Հովհաննես Փիլիպոսյանի նկատմամբ նշանակել «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ «նկատողություն» տեսակի կարգապահական տույժը:

Արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական **Ա. Դավթյան**